ԿՈՄՊԼԵՔՍԱՅԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ

ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սովետահայ ճարտարապետության տաղանդավոր հիմնադիր Ալեքսանդր Թամանյանի ստեղծագործությանը թեև նվիրվել են գրքեր և բազմաթիվ հոդվածներ, սակայն դրանք դեռևս չեն ընդգրկել նրա գործունեության բոլոր կողմերը, ստաջադիմական ասպեկտները։ Եթե նրա նախագծած հասարակական



Նկ. 1. Լուկաշեն. գյուղատնտեսական մանկական ավանի գլխավոր հատակագիծը։

խոշոր շենքերը, Երևանի ու Հանրապետության այլ քաղաքների հատակագծերը մասնագիտական քննարկման առարկա են դարձել[1]*, ապա գյուղական և ավանային բնակավայրերի հատակագծման ուղղությամբ կատարած նրա աշխատան-*

[1] Ю. С. Яралов, Тамапян, М., 1950, Վ. Հարությունյան, Ալեքսանդր Թամանյան, Երևան, 1958, «Ալեքսանդր Թամանյան», Երևան, 1960, Լևոն Զորյան, Թամանյան, Երևան, 1978։

քը ըստ արժանվույն չի լուսաբանվել[2]։ Այնինչ Թամանյանի ստեղծագործության այդ բնագավառը նույնպես որոշակի հետաքրքրություն է ներկայացնում և ակնհայտորեն ցույց տալիս, որ Սովետական Հայաստանում ծավալած իր բեղմնավոր գործունեության հենց առաջին տարիներին, այն ժամանակաշրջա-



Նկ. 2. Լուկաշեն. կցաշար միահարկ բնակելի տան տիպ. հատակագիծ և ճակատ։

նի սովետական ճարտարապետության և քաղաքաշինության զարգացման հրատապ խնդիրներով տոգորված, նա ջանացել է մեր հանրապետությունում արմատավորել կոմպլեքսային կառուցապատման առաջադիմական սկզբունքը.

Հայտնի է, որ 20-ական թվականներին մեր երկրի տարբեր քաղաքներում՝ Մոսկվայում, Լենինգրադում, Բաքվում և այլուր, առաջին քայլերը կատարվեցին հիշյալ քաղաքների արվարձաններում բանվորական ավանների կոմպլեքսային կառուցապատման ուղղությամբ։ Դրա արդյունքներն են Լենինգրադի Տրակտորնայա փողոցի, Մոսկվայի Ուսաչովկա, Դանգաուերովկա և Բաքվի Շահումյանի անվան (Արմենիքենդ) բանավանների կոմպլեքսային կառուցապատումները՝ տիպային բնակելի և սպասարկող շենքերով։ Ալեքսանդր Թամանյանը այդպիսի կառուցապատման որոշ փորձ ուներ դեռևս նախասովետական ժամանակաշրջանից։ Հիշենք նրա նախագծով, զարմանալի կարճ ժամկետում՝ երկու և կես ամսում, իրականացված Յարոսլավլի տոնավաճա-

[2] Л. К. Долуханян, Архитектура Советской Армении, 20-ые годы, Ереван, 1980, с. 37—38.

ռային համալիրը, ուր ներդաշնակորեն ու բարձր վարպետությամբ զուդակցվել էին ռուսական ժողովրդական փայտի ճարտարապետության մոտիվներով մտահղացված բաղմաբնույթ շենքերն ու կառուցվածքները[3]։ Նրա նախագծով է իրականացվել 1913—1923 թթ. Մոսկովյան-Կազանյան երկաթգծի







Նկ. 3. Լուվաշեն. կցաշար երկհարկ բնակելի տան տիպ. հատակագծեր և ճակատ։

Կրատովի կայարանի մերձակայքում գտնվող հիվանդանոցային համալիրի ճարտարապետական անսամբլը, որի կազմի մեջ, բացի հիվանդանոցի մասնաշենքից, մտնում են բուժարանը, խոհանոցը, կաթսայատունը, բժիշկների

[3] Ю. С. Яралов, նշվ. աշխ., էջ 16։

բնակելի տների մի քանի տիպեր[4]։ 1918 թ. Թամանյանը նույն կայարանի մոտ երկաթգծի ծառայողների համար նախագծել է ամառանոցային ավան[5]։



Նկ. 4. Լուկաշեն. կցաշար բնակելի տներ. վերևում՝ միահարկ («A» տարբերակ), ներքևում՝ երկհարկ («C» տարբերակ)։

Սովետական Հայաստանում այդ փորձի իրականացման արդյունքը եղավ Լուկաշեն (այժմ՝ Ա. Խանջյանի անվ. սովխոզ) և Նուբարաշեն (այժմ՝ Սովետաշեն) ավանների հատակագծումն ու կոմպլեքսային կառուցապատումը[6]։

4 Նույն տեղում, էջ 16—17։

5 Նույն տեղում, էջ 18։

6 Խորին շնորհակալություն ենք հայտնում Գ. Ա. Թամանյանին՝ հոր արխիվի նյութերը մեզ սիրալիր տրամադրելու համար։

Դրանցից առաջինը ստեղծվեց Սարդարապատի (այժմ՝ Հոկտեմբերյանի) շրջանում, որբանոցի սաներին բնակեցնելու և գյուղատնտեսության մեջ կոմունայի սկզբունքով ներգրավելու նպատակով։ Ըստ 1926 թ. կազմված հատակագծի, Լուկաշեն ավանը նախատեսվում էր 5000 բնակչի համար, ընդար-

Նկ. 5. Նուբարաշեն. ավանի գլխավոր հատակագիծը.

ձակվելու հնարավորություններով՝ բնակչության թվի ավելացման դեպքում[7]։ Ավանը նախագծված էր հնգակող պարագծով՝ մեջտեղում շրջանաձև հասարակական կենտրոնով (ուր ձգվում էր ավան տանող գլխավոր մայրուղին) ու ճառագայթաձև գլխավոր փողոցներով դեպի բնակելի թաղամասերի հանգույցները (տես նկ. 1)։ Բնակելի թաղամասերը իրար հետ հաղորդակցվելու էին ավելի նեղ, կորագիծ փողոցների օգնությամբ։ Հատակագծում նպատակահարմար ձևով տեղաբաշխված էին նաև արտադրական և սպասարկման (այդ թվում բաղնիքի) շենքերը, խաղադաշտը, հասարակական օգտագործման կանաչ տարածությունները և այլն։ Լուկաշենի համար Թամանյանը մշակել էր կոմունայի անդամների՝ 1—2 հարկանի բնակելի տների տիպ՝ կենցաղային որոշ հարմարություններով։ «A» և «B» տիպերը միահարկ են, կցաշար (спаренный)։ Կապիտալ պատերով իրարից անջատված յուրաքանչյուր բնակարանում նախատեսված են բնակելի սենյակներ, խոհանոց, խորդանոց, զու-

[7] Л. К. Долуханян, նշվ. աշխ., էջ 37։

զարան, նկուղ (նկ. 2. հոդվածում «B» տիպի նկար չի տրվում)։ Արտաքուստ ունեն փայտաշեն երկու պատշգամբներ, որոնք ամառվա ամիսներին Արարատյան դաշտավայրի կլիմայական շոգ պայմաններում կարող էին ծառայել որպես բնակարանի օգտագործվող կարևոր մասեր։ Միահարկ բնակելի տների





Նկ. 6. Նուբարաշեն. կցաշար միահարկ բնակելի տան տիպ։

երկու տարբերակներն էլ բնորոշ են հայկական ժողովրդական ճարտարապետության ավանդույթներին հարազատ հատկանիշներով։ Նույնը կարելի է ասել նաև բնակելի տան երկհարկանի («C») տարբերակի մասին (նկ. 3), որը նույնպես կցաշար է, պարունակում է չորս բնակարան։ Այս տարբերակներով էլ ավանը կառուցապատվեց (ցավոք, ոչ լիովին) այն տարիների շինարարական ոչ կատարյալ մեթոդներով։ Թեև անցել է ավելի քան կես դար, ու կառուցված շենքերը տարիների ընթացքում կցակառուցումներով որոշ աղավաղումների են ենթարկվել, սակայն շարունակում են կրել քաղաքաշինական միասնական սկզբունքի և կոմպլեքսային կառուցապատման բարերար կնիքը (նկ. 4)։

Լուկաշեն ավանի կառուցապատման դրական փորձը Թամանյանը ավելի լայն ընդգրկումով կիրառեց Նուբարաշեն (Սովետաշեն) գյուղական բնակավայրի հատակագծման ու կառուցապատման մեջ, որի նախագիծը կազմեց 1929 թվականին[8]։ Նուբարաշենի հատակագծում հեղինակը զուգակցեց փո-

8 Նույն տեղում, էջ 38։

ղոցների ուղղանկյուն և շառավղային-շրջանաձև ցանցերը (նկ. 5)։ Ավանի կենտրոնական մասով անցնող ու կանաչ գոտում գտնվող շրջանցքը բնականորեն այն բաժանում է երկու հիմնական մասերի, որոնց հրապարակները իրար են միացված մի ուղղագիծ փողոցով։ Այս հատակագծում ևս տեղ են գտել հասարակական շենքերը, խաղադաշտը, հասարակական օգտագործման



Նկ. 7. Նուբարաշեն. կցաշար երկհարկ բնակելի տան տիպ. հատակագծեր և կտրվածք։

կանաչ տարածությունները՝ տեղաբաշխված բնակելի թաղամասերի կենտրոններում։ Հատակագծի ընդհանուր պարագիծը եռաթև է, կիսաշրջանաձև թևերով, որոնցով նպատակահարմար լուծում են ստացել մենատներն իրենց տնամերձ հողամասերով։

Նուբարաշենի համար մշակած բնակելի տներն ավելի հարուստ ընտրանի ունեն, բաղկացած են տասը տիպերից, ըստ որում մի քանի տիպեր պարզապես մեկ հիմնականի տարբերակներ են։ Որպես կանոն բոլոր տներն էլ կցաշար են՝ բաղկացած երկու բնակարաններից, որոնք իրարից անջատված են տնամերձ հողամասերի սահմանագծում տեղավորված կապիտալ պատով (նկ. 6)։ Բացի երկրորդ տիպից, որտեղ մեկական սենյակ տեղավորված է ձեղնահարկում, մնացածներում տները միահարկ են (չհաշված նկուղները, որոնցով անխտիր ապահովված են բոլոր բնակարանները)։ Տիպերը միմյանցից տարբերվում են սենյակների քանակով (2—3) և օժանդակ հարմարությունների կազմով, ըստ որում, նորից ելնելով Հայաստանի բնակլիմայական պայմաններից ու ժողովրդական բնակելի տան ավանդույթներից, բոլոր բնակարաններն ունեն ծածկված պատշգամբներ (նկ. 7)։ Առանց անդրադառնալու վերը հիշատակված տիպային տների ֆունկցիոնալ և ճարտարապետական արժանիքներին, նշենք որ գյուղատնտեսական մի փոքր բնակավայրի կառուցապատման համար այն տարիներին բնակելի տների այդպիսի բազմազան տիպերի մշակումը ինքնին դրական երևույթ է։

Նույն ժամանակահատվածում՝ քսանական թվականներին, կոմպլեքսային կառուցապատման սկզբունքը որոշ կիրառություն ունեցավ Երևանում և Լենինականում։ Մայրաքաղաքում դրա առաջնեկը բամբակաղտիչ գործարանի (Գրախտի) բանվորների բնակելի թաղամասն է, որը ճարտարապետ Հովհաննես Խաչատրյանի նախագծով կառուցապատվեց երկհարկանի տիպային բնակելի տներով. դրանք տեղադրվեցին թաղամասի պարագծով, այն հաշվով, որ նրա կենտրոնական մասը կանաչապատվի, ունենա խաղահրապարակներ ու բնակիչների հանգիստը կազմակերպելու այլ հարմարություններ[9]։

Ավելի ուշ, 1929 թ., կառուցապատման այդ սկզբունքը որոշ կիրառություն գտավ Ա. Թամանյանի հատակագծած նոր Արարկիր ավանի (որը հետագայում միաձուլվեց Երևանին) կառուցապատման ժամանակ, որտեղ օգտագործվեց Նուրարաշենի համար մշակված բնակելի տների տիպային նախագծերը[10]։

Կոմպլեքսային կառուցապատման փորձեր կատարվեցին նաև Լենինականում, 1926 թվականի երկրաշարժից հետո, քաղաքի կենտրոնական մասի վերակառուցման ժամանակ, որն իրականացվեց ըստ ճարտարապետ Դավիթ Ջիսլեի մշակած գլխավոր հատակագծի։ Նրա նախագծով քաղաքի տարբեր մասերում (կիսաշրջանաձև բուլվարի շուրջը, Երրորդ ինտերնացիոնալի անվան փողոցի մի հատվածում) տեղադրվեցին երկհարկանի տիպային (մի քանի տարբերակի) բնակելի տներ։ 1927 թ. ճարտարապետ Ղազար Սարգսյանի ստեղծած բնակելի տների տիպային նախագծերով սկսեց կառուցապատվել Լենինականի տեքստիլ գործարանի բանավանը.

Թեև մեր քաղաքաշինական պրակտիկայի քսանական թվականների վերը քննարկված օրինակները չի կարելի դեռևս դիտել որպես կոմպլեքսային կառուցապատման լիարժեք արդյունքներ, սակայն դրանք անվիճելիորեն առաջադիմական պետք է համարել սովետահայ քաղաքաշինության և ճարտարապետության կազմավորման վաղագույն փուլում, քանի որ առաջադրվել են կոմպլեքսայնության խնդիրները ու մասամբ իրականացվել։ Երևանական թվականներին այդ սկզբունքները ավելի լայնորեն կիրառվեցին Երևանի Ս. Մ. Կիրովի անվան գործարանի բանավանի (3-րդ մաս) հատակագծման (հեղինակներ՝ Մ. Մաղմանյան, Հ. Մարգարյան, Գ. Քոչար, Ս. Սաֆարյան) և կառուցապատման ժամանակ[11]։

ПЕРВЫЕ ОПЫТЫ КОМПЛЕКСНОЙ ЗАСТРОЙКИ В ГРАДОСТРОИТЕЛЬНОЙ ПРАКТИКЕ СОВЕТСКОЙ АРМЕНИИ

ВАРАЗДАТ АРУТЮНЯН

Резюме

Передовой комплексный метод застройки новых населенных пунктов и жилых районов начал практиковаться в Советском Союзе еще в 20-х годах (в Ленинграде, Москве, Баку и др.). В это же время он нашел применение и в градостроительной практике Советской Армении, где был впервые внедрен основоположником армянской советской архитектуры А. Таманяном в 1926 г. при составлении генерального плана поселка Лукашен для детдомовцев (ныне совхоз им. А. Ханджяна, Октемберянский район). Поселок был застроен серией типовых жилых домов, соответствующих местным климатическим условиям и традициям народного зодчества, а также общественных и административных зданий. Этот же метод А. Таманян применил в 1929 г. при составлении генерального плана поселка Нубарашен (ныне Советашен) и разработке для него серии типовых жилых домов.

---

9 В. М. Арутюнян, К. Л. Оганесян, Архитектура Советской Армении, Ереван, 1955, с. 31—32.

10 *Նույն տեղում, էջ 21։*

11 Л. К. Долуханян, *նշվ. աշխ., էջ 83։*